Պարույր Սևակ

Իբրև սկիզբ

Իբրև սկիզբ ընդամենը ես այս կասեմ.
Աշխարհում կա ջահելությո՛ւն,
Կա կյա՛նք,
Կա սե՛ր,
Կան տղաներ և աղջիկնե՛ր,
Կա շե՛կ, կա սև՛:
Եվ մի աղջիկ՝
Սև աչքերով, սև մազերով,
Ինձ գերել է, խելքից հանել իր նազերով:
Գալիս է նա և շատ հաճախ
Ձեռքըս բռնում, ափըս բացում,
Սև աչքերը մերթ՝ կկոցում,
Մերթ՝ լայն բացում,
Մերթ փակում է,-
Սկըսվում է... գուշակո՛ւմը:
-«Ապո՛ւ-ապո՛ւ, կապո՛ւ-կապո՛ւ...
Եկ մի տեսնենք՝ ի՞նչ կա ափում...»:
-«Աթո՛ւ-աթո՛ւ, հա՛ թուհ-հա՛ թուհ...
Տեսնենք՝ տղան ի՞նչ է ասում...»:
-«Անա՛մ-փերո՛ւ, չանա՛մ փերո՛ւ... »:
Եվ մի օր էլ չեմ համբերում.

-Գիտե՛մ, գիտե՛մ,
Գուշակ է՛լ ես, կախարդ է՛լ ես.
Չէ՞ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես:
Բայց իմ ափը ի՞նչ է տալիս:
Ինքդդ գիտես , որ մի ափը
Մինչև անգամ ծա՛փ չի տալիս:
Ախար ի՞նչ կա այդ ափի մեջ:
Կուզե՞ս
դառնամ
մարդ՝ ափի մեջ...
Մարդկանց առաջ և քո առաջ
Ահավասիկ ինքս եմ բացում
Ինչ որ ունեմ - ինչ որ չունեմ
Իմ հոգո՛ւ մեջ.
Մարդկանց առաջ և քո առաջ
Ահավասիկ ինքս եմ բացվում,
Ինչպես մանուկն օրորոցում՝
Երբ շոգում է...

30.V.1957թ.
Մոսկվա